## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մաղաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 60-Ա

<<28>> ապրիլի 2025 թվական                    քաղաք Մարալիկ

### ԿԻՊՐՈՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 22-ԻՑ 28-Ը ԿԱՅԱՑԱԾ ՍԱՄԲՈՅԻ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆԱՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ, ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ՝ ՍՅՈՒԶԱՆՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԵՎ ԺՈՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 42-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի սամբոյի ֆեդերացիայի նախագահի 2025 թվականի ապրիլի 1-ի N 67 գրությունը՝ սամբոյի Եվրոպայի առաջնության մասնակիցներ՝ Սյուզաննա Մանուկյանի և Ժորա Բաղդասարյանի գործուղման ծախսերը հոգալու մասին, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին**
**որոշում է.**

1. Կիպրոսի հանրապետությունում 2025 թվականի ապրիլի 22-ից 28-ը կայացած սամբոյի Եվրոպայի առաջնության մասնակիցներ, Անի համայնքի բնակիչներ՝ Սյուզաննա Մանուկյանի և Ժորա Բաղդասարյանի գործուղման ծախսերի համար համայնքի 2025 թվականի բյուջեի Գործառնական դասակարգման բաժին 10, խումբ 07, դաս 01 և տնտեսագիտական դասակարգման 4727 /Կրթական մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից/ հոդվածից յուրաքնչյուր մասնակցի տրամադրել 150 000 /մեկ հարյուր հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ դրամական աջակցություն:

2. Հաշվի առնելով, որ Սյուզաննա Մանուկյանը անչափահաս է, սույն որոշման 1-ին կետով նախատեսված դրամական աջակցությունը հատկացնել նրա ծնողին՝ Կարեն Մանուկի Մանուկյանին /անձնագիր AT0388569, տրված՝ 18.02.2020թ. 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ Շիրազի փողոց, շենք 35, բնակարան 10/:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | Կողմ՝ 12 | դեմ՝ 0 | ձեռնպահ՝ 0 |
|---|---|---|---|
| Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Ա. ՇԱԲՈՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Հ. ՋԱՏԻԿՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Ժ. ԱԼԵՔՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ | | -------------- | -------------- |
| Ն. ՍԱՐՈՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Գ. ՀԱԿՈԲՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Գ. ՊՈՂՈՍՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Մ. ԱՍԼԱՆՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<28>> ապրիլի 2025 թ.
քաղաք Մարալիկ